Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

646

84 v
2-25

1р. 84 Ս / Ժ-25 աբ
Т049 1511

«ԱՂԲԻՒՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ № 3

84 1511

ԺԱՆ ԲԱՏԻՍՏ ԼԻՒԼԻԻ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

1511 13318 Ժ-27

ՓՈԽԱԴՐԵՑ

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ
ՍՐՐԵԼԵՍՆ ՓՈՂՈՑ, № 1 ԵՒ 2
1884

6062

Дозволено цензурою. Тифлисъ, 10 ноября 1884 г.
Типографія И. Мартиросіанца, Орбл. ул., д. № 1 и 2

3191
40

Ա.

ՓՈՔՐԻԿ ՋՈՒԹԱԿ ԱԾՈՂԸ

Գալիսի մի գեղեցիկ առաւօտ Ֆլորենցիայի Սանտո-Սպերիտո հիւրանոցին մօտեցաւ մի կառք դուքս Ֆիզի տոհմանիշով. նրան հետևում էին ճիաւոր մատիկաւորներ և ծառաներ:

—Յետ քաշուէք, յետ, լսվում էր ամեն կողմից. և մարդկի հետքերը յետ էին ածում խռնուած անբոխին:

—Սենեակ տուէք նորին պայծառափայլութեան դուքս Ֆիզին, կանչում էին ծառաները:

—Ձուտ, ընթրիք պատրաստեցէք, կարգադրում էին մանկաւիկները վազվզելով խոհանոցներն ու ծառաների սենեակները։

Այդ ժամանակ նա, որնոր այդ իրարանցումի պատճառն էր, ծանր ու հանդիստ իջնում էր կառքից։

—Իսկոյն, այս րոպէին ամեն բան պատրաստ կը լինի, կրկնում էր տանտիկինը, որ ինքն իրան կորցրել էր այդպիսի նշանաւոր հիւր ընդունելու բախտունենալուցը։

—Ինորհ բերէք, համեցէք, ձերդ պայծառափայլութիւն, ասում էր նա, խորը գլուխ տալով իշխանին։

Այս արտակարգ ընդունելութիւնը տեսնելով, խոհարարները բերանաբաց կանգնել էին և ապուշ կորած նայում լուսամուտներից, բայց Գիզի ծառաները շուտով նրանց իրանց տեղը քշեցին։

Դուքս Գիզը, վեհ կերպով բարձրացնելով իր շիկահեր գլուխը և կապոյտ աչքերով հարևանցի ակնարկ ձգելով իրան շրջապատող ամբոխի վրայ, կարծես չէր նկատում այն իրարանցումն ու ազմուկը, որ պատճառել էր իր գալուստը։

Արեգակը մայր էր մտնում. կէսօրուայ խեղդող շոգից յետոյ բարձրացաւ մի հով քամի, որ չորս կողմը տարածեց պարտէզների ծաղիկների անուշահոտ բուրմունքը։ Այնքան գեղեցիկ երեկոյ էր, որ մարդու սիրտ չէր տալիս սենեակումը նստել։

—Ես այստեղ կը մնամ մինչև ընթրիքը պատրաստեն, ասաց դուքսը, և, երկկարգ սիւների տակ քարէ նստարան տեսնելով, նստեց նրա վրայ։

Ծառաները քիչ քիչ քաշուեցին. ամեն մարդ իր բանին կացաւ և դուքսը մնաց, ինչպէս ինքը կարծում էր, մենակ։

Նայելով դէպի անսահման հեռաւորութիւնը, ուր ամենայն բան մթնում և հետզհետէ խառնվում էր, նա մտածմունքի մէջ ընկաւ. և նրա միտքը շատ հեռու գնաց։

Մի հանդարտ ձայն սթափեցրեց նրան իր քաղցր երազներից։

Ձայնը շատ ախորժ տպաւորութիւն գործեց դուքսի վրայ. նա սկսեց հետաքրքրութիւնով չորս կողմը նայել, և տեսաւ մի տղայ՝ որ նստած սանդուղքի ցածի աստիճանի վրայ, մեղմ ջութակ էր ածում, այնպէս վարպետ կերպով, որ ամեն երաժիշտ

կը նախանձէր նրան։ Նկատելով որ իրան ականջ դնող կայ, տղան վերկացաւ և սկսեց ոգևորուած ածել։

—Այդ ինչ եղանակ ես ածում, հարցրեց նրան դուքսը։

—Ըսկի, հէնց ինչ որ իսկիքիս փչում է։

—Ո՞ւմնից ես ջութակ ածել սովորել։

—Հօրիցս, քանի որ կենդանի էր։

—Իսկ յետոյ։

—Ոչ ոքից։

—Հայրդ վաղուց է մեռել։

—Հա՛, արդէն երեք տարի է։

—Պայրդ ինչո՞վ է ապրում։

—Հօրս մահից մի քիչ յետոյ նա էլ մեռաւ։

—Հապա այժմ ո՞վ է պահում քեզ։

—Ես ինքս։

—Ինչո՞վ ես ապրում։

—Փողոցներում ջութակ եմ ածում. դրա համար հարուստ տների ծառաները ինձ երբեմն կերակրում են, քաղցածին էլ այդ է պէտք. այսօր առաջին անգամն է որ ածում եմ այստեղ։

—Ու շատ լաւ ես ածում, շարունակեց դուքսը, շարժուած տղայի պատասխաններից։—Քանի՞ տարեկան ես։

—Չգիտեմ։

—Ի՞նչ, չես իմանում թէ երբ ես ծնուել։

—Ոչ, այդ գիտեմ, մայրիկս շատ անգամ ինձ ասում էր, որ ես 1633-ին եմ ծնուել։

—Ասել թէ՝ տասներեք տարեկան ես։

—Կարելի է, ես հնգից աւելի հաշուել չգիտեմ։

—Ափսոս, սա որ Փարիզումը լինէր, շատ առաջ կը գնար, ասաց դուքսը ցած ձայնով։

—Տղան լսեց այս նկատողութիւնը և սկսեց մտածել, թէ ինչ էր ուզում արդեօք դրանով ասել, և ինքը ինչո՞ւ կը կարողանայ առաջ գնալ, եթէ Փարիզումը լինէր։

Այդ ժամանակ եկան իմաց տուին որ ընթրիքը պատրաստ է, և դուքսը ձեռքը գրպանը տանելով մի ոսկի հանեց ու շպրտեց տղային։

Ոսկին վերառնելով տղան կանգնեց ու մտածողութեան մէջ ընկաւ։

—Երևի նա սխալուել է, մտածում էր տղան, երեթամ ցոյցտամ դուքսին։

Նա վազեց դէպի հիւրանոցը, առանց լաւ մտածելու իր անելիքի վրայ։

Բ.

ՈՍԿԻՆ

դիտէր նա թէ ինչպէս մօտենայ իշխանին, և ինչ ասէ նրան, բայց և այնպէս առաջ էր գնում, անցնելով զանազան անցքերով ու խոհանոցներով։ Այդ ժամանակ նրա ետևից հասաւ մի ծառայ սկուտեղը ձեռքին և նրան ծառայ կարծելով սկուտեղը տուեց նրան, անձեռոցիկը քցեց թևն ու ինքը վազելով վերադարձաւ խոհանոց։

Լիլլին (այսպէս էր տղայի անունը) սկուտեղը բռնած վառահ կերպով մտաւ սենեակն ու սկուտեղը տուեց սեղանապետին, յետոյ նա կանգնեց միւս ծառաների մօտ և սկսեց դիտել դուքսին։

Դուքսին տեսնելով Լիլլին վհատուեց. նա էլ առաջուան քաղցր բարի անձանօթը չէր, այլ մի զոռոզ և անմատչելի իշխան։

—Գուցէ ինքը ինձ նկատի ու խօսի ինձ հետ, տղան մխիթարում էր ինքն իրան, այն ժամանակ ես յետ կը տամ նրան իր ոսկին։

Լիլլին երկար ժամանակ սպասեց և վերջապէս ուրիշ ճար որ չգտաւ՝ դիմեց ծառաներից մինին ասելով.

Ներողութիւն որ անհանգստացնում եմ ձեզ, սկսեց նա շփոթուած, ես պէտք է ձեր պարոնի հետ խօսեմ, մինչև նրա ճանապարհ ընկնելը...

Հրա՛ս սրան տես, ինչ է ասում, արհամարհանքով պատասխանեց ծառան, ձեռքը թափ տալով նրա վրայ։

—Հը, ինչ է, թէ կ'ուզես խփիր, միայն թէ թող պարոնիդ հետ խօսեմ. դէ, խփիր, կրկնում էր տղան. մի վախենար, փոխարէնը չեմ դարձնիլ։

—Ա՜յդ էր պակաս։

—Չէ, ասենք որ ուզենամ կարող եմ,

այնպէս որ չլինի, այսպէս հо կարող եմ,— ասաց ու ոտը քցեց ծառայի առաջ—և դու կարգին կը փռուես գետնի վրայ։

Ծառան չկարողացաւ ծիծաղը պահել։

—Դէ սա՛ տեսնենք, դուքսի հետ ինչ բան ունիս։

—Լաւ, եթէ այդպէս է կ'ասես։ Ես ջութակ էի ածում, նա էլ ականջ էր դնում. գովեց թէ լաւ եմ ածում և յետոյ ներս գնալուց առաջ գրպանիցը փող հանեց քցեց ինձ. վերառայ թէ չէ՝ նայեցի, տեսնեմ որ ոսկի է։

—Է՛, յետո՞յ։

—Յետո՞յ, պէտք է ոսկին վերադարձնեմ իրան։

—Ի՞նչպէս թէ վերադարձնես... ինչո՞ւ համար։

—Նրա համար որ դուքսը անշուշտ սխալուել է, թէ չէ այդպիսի բանի համար մարդ ոսկի կը տայ ըսկի։

—Այ քեզ յիմար Իտալացի, ասաց ծառան ձեռքը շարժելով ու հեռացաւ։

—Յիմա՞ր, յիմա՞ր, ինչու եմ յիմար...

Մութն ընկաւ։ Սաստիկ մթնագիշեր էր։ Բոլորն իրար էին անցել և լապտերները վառած պատրաստում էին ճանապարհ ընկնելու. ծառաները, մանկաւիկները, բոլորը արդէն նստած էին իրանց ձիերի վրայ, դուքսը հանդարտ բարձրացաւ ու նստեց կառքի մէջ. կառապանը մտրակը շրխկացրեց և կառքը հանդարտ շորորալով ճանապարհ ընկաւ։

Խեղճ Լիլլին ճաքը կտրած թռաւ կառքի ելելիքի վրայ նստեց և, առանց նկատուելու, միւսների հետ ճանապարհ ընկաւ։

Գ.

ՔԹՈՑԻ՝ՄԻՋԻ ՁՈՒՆԸ

Լույսը բացուելուն մօտ էր. կառքը հանգարտ առաջ էր գնում, Լիլլին էլ յետևիցը. ճանապարհին աչքովն ընկաւ որ կառքի ետևից մի քթոց է կապած. կառքը մի տեղ կանգնեց, Լիլլին մօտ գնաց ու հետաքրքրութիւնով նայեց քթոցի մէջ, տեսաւ մի փոքրիկ շուն պառկել է քթոցում ու քնել. շատ զարմացաւ: Մէկ մտքովն անցկացաւ որ շանը քթոցից դուրս քցի ու ինքը պառկի տեղը, մէկ էլ մեղքն եկաւ, սիրտը չտուեց որ խեղճ շանը դուրս քցի քթոցից:

—Փորձենք, կարելի է քթոցում երկուսիս էլ տեղ լինի, մտածեց նա ու մտնելով քթոցը քանի կարող էր կուչեկաւ: Ձունը կարծես նրա միտքը հասկացաւ, ուրախուրախ վեգտալով իր նոր ընկերի ձեռները լիզեց, կծկուեց կպաւ քթոցիցը ու նրա համար տեղ բացարեց: Կառքը քշեցին:

Լիլլին քնեց, և երբ զարթեց արդէն լուսացել էր, բայց չէր իմանում թէ որտեղ է գտնվում:

Շորս կողմը նայեց տեսաւ ձի բան չկայ, կառքն էլ դատարկ կանգնած է կառքատանը:

Այժմ էլ վախենալու բան չկայ, մտածեց նա, երթամ խօսեմ դուքսի հետ և դուրս թռաւ քթոցից գնաց դէպի հիւրանոց, ուր նոյն իրարանցումը, նոյն խառնակութիւնը տեսաւ, ինչ որ Ֆլորենցիայումն էր, և բազմութեան մէջ ճանաչեց այն ծառային, որ Ֆլորենցիայից դուրս գալուց առաջ նրան չէր թողնում դուքսի մօտ գնալ:



Դ.

ՍԽԱԼԸ ՈՒՂՂՈՒՄ Է

Ո՞նչ տեղացի ես, դուռ զարմացած ծառան։

—Քեզ ի՞նչ։ Պարոնդ որտեղ է, պէտք է տեսնեմ, բան ունիմ նրան ասելու։

—Աբի ու մի զարմացի։ Ախր ձեր քաղաքը որտեղ, Տուբինը որտեղ. ձեր քաղաքից ի՞նչպէս եկար Տուբին։

—Այնպէս ինչպէս դու, միայն այն զանազանութիւնով՝ որ դու իրրև ծառայ ձիով էիր գալիս, իսկ ես կառքով։

Այս որ լսեց ծառան՝ շփոթուեց և սկսեց նրա հետ քաղաքավարի խօսել։

—Դուքսը առանձնասենեակումն է. այս-

պէս բարձրացէք վերև, երկրորդ յարկում աջ կողմի՛ վրայ է։ Եթէ նախահաշի մասին հարցնէ, ասէք որ այս րոպէին պատրաստ կը լինի։

Լիլլին վազեց վերև, առանձնասենեակի դուռը բաց էր. դուքսը մէջքը դէպի դուռն արած նստած էր գրասեղանի առաջ։ Լիլլին դուքսի տուած փողերը ձեռքին կամաց ներս մտաւ։

Ոտնաձայն լսելով, դուքսը ետնայեց։

—Այդ ո՞վ է, հարցրեց նա։

—Ես եմ, Բատիստ Լիլլին. երէկ երեկոյ դուք ինձ սխալմամբ մի ոսկի տուեցիք. դիշերն էլ ճանապարհին կարծելով թէ մուրացկան եմ մի արծաթ փող շպրտեցիք կառքից. ահա այն փողերը, յետ առէք։ Այս ասելով Լիլլին փողերը դրեց սեղանի վրայ։

—Երէկ երեկոյ, կրկնեց զարմացած դուքսը.—երէկ երեկոյ ես Ֆլորենցիայումն էի և ամենևին չեմ յիշում...

—Դուք պարոններդ որտեղից ամեն բան յիշէք. բայց ես լաւ յիշում եմ ձեզ։ Ահա ձեր փողերը առէք և ինձ այնքան տուէք, որքան կը կամենաք։

—Ոչինչ չեմ հասկանում, ասում էր դուքսը Լիլլիի երեսին նայելով, — ես քեզ առաջին անգամն եմ տեսնում։

—Ի՞նչպէս, միթէ չէ՞ք յիշում որ ես երէկ Սանտո-Սպերիտո հիւրանոցում ջուրթակ էի ածում և դուք լսում էիք։

—Հա՛, այժմ յիշեցի։ Բայց ինչու համար ես եկել, և ինչպէս ես եկել այստեղ։

—Ձեր ո՞ր հարցմանը պատասխան տամ, հարցրեց Լիլլին։

Դուքսը ծիծաղեց։

—Ի հարկէ նախ առաջին հարցմանը, թէ ինչու ես եկել։

—Ես եկայ որ յետ դարձնեմ ձեզ այն ոսկին, որ դուք երէկ Ֆլորենցիայում տուեցիք ինձ. ես ասացի անպատճառ սխալուած կը լինիք, թէ չէ ջուրթակ ածելուս համար այնքան շատ չէիք տայ. բայց փոխանակ ոսկին յետ առնելու, դուք ինձ էլի փող տուեցիք, կարծելով թէ մուրացկան եմ. ես ի հարկէ չէի կարող ընդունել այն փողը, քանի որ մուրացկան չեմ։ Ես ջուրթակ եմ ածում և այդպիսով ազնիւ ճանապարհով հաց եմ վաստակում։

—Ինչ լաւ տղայ ես, ասաց դուքսը, նը-

րա ձեռքը բռնելով։ Դէ, այժմ ասա տեսնենք ինչպէս եկար այստեղ։

—Շատ դժուարութիւնով, պատասխանեց Լիլլին։ Առաջ ես հէնց Ֆլորենցիայումն էի ուզում ձեզ հետ խօսել, բայց չէի իմանում ինչպէս անեմ որ ձեզ տեսնեմ, մոլորուել մնացել էի. այսպէս մնացի մինչև ձեր կառքը լծեցին, նստեցիք։ Ի՞նչ, էլ ինչ անէի. հէնց որ տեսայ բոլորը նստեցին, ես էլ թռայ նստեցի կառքի ելելիքի վրայ և այնտեղ մնացի մինչև այն ժամանակ, երբ կառքը կոտրուեց... Կառքը շինելու ժամանակ ես էլի մօտեցայ ձեզ որ ոսկին յետ դարձնեմ ու իսկոյն Ֆլորենցիա գնամ. այն էլ դուք չթողեցիք բերանս բաց անեմ խօսեմ՝ ողորմութիւն տուեցիք, մուրացկան անուանելով ինձ։ Այդ իմ սրտիս շատ դիպաւ, ես աշխարհի այն ծայրն էլ կ'երթամ կը հասկացնեմ, որ ես մուրացկան չեմ։ Բայց որովհետև կառքի ելելիքի վրայ նստած հանգիստ չէր, վայր եկայ մտայ ձեր շանքթոցը և այդպէս հասայ այստեղ։ Այսքան էր ասելիքս. այժմ՝ եթէ ջուրթակ ածելու համար մի բան կ'ուզենաք տալ, տուէք. քանի շուտ է յետ դառնամ մեր քաղաքը։

31/91
40
ՀԱՅ. ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ-СОР А.
Ա. Մ. ԳՈՐԿՈՒՆՈՎԻ
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
LENIN adina
Центр. Библиотека
№ 15/1
ՊԵՏՐՈՎԱ

—Ձեր քաղաքում ինչ կայ. ինչ ես թո-
ղել, որ այդպէս շտապում ես:

—Ջուլթակս... Դուք ծիծաղում էք որ ես
այդպիսի բանի համար ցաւում եմ, որով-
հետև դուք շատ բան ունիք. բայց իմ ու-
նեցած-չունեցածս այդ է: Այն էլ վախենում
եմ գալուցս յետոյ, ով է իմանում, ջար-
դած լինին:

—Ա՛ռ քեզ մի ջուլթակի փող,—ասաց
դուքսը մի քանի ոսկի հանելով գրպանից և
տալով Լիլլիին,—նորը ա՛ռ, թէ որ այն
ջարդած լինին:

—Նորը նրա տեղը չի բռնի:

—Ինչո՞ւ:

—Այնպէս. նոր առածը իմ ջուլթակի
նման չի լինի:

—Դրուստ որ երեխայ ես:

—Ի հարկէ այդպէս կ'ասէք. դուք այն-
քան բան ունիք, որ եթէ նոցանից մէկը
կամ երկուսը կորչի էլ, ով գիտէ ոսկի չնը-
կատէք էլ. իսկ ես բացի ջուլթակից ոչինչ
չունիմ. նա ինձ համար ամէն բան է. նա
իմ ընկերն է, իմ բարեկամն է. նոր ջու-
լթակը նրա նման չի լինի:

—Որ այդպէս է, այս փողն ա՛ռ ու վա-

զի ջուլթակդ դուն, կարելի է դեռ ջար-
դած չլինին:

—Բոլորը վերցնեմ...

—Այո, բոլորը:

Լիլլին զարմանքից չէր իմանում ինչ ասի:

—Նախաճաշը պատրաստ է, ներս մըտ-
նելով յայտնեց ծառան: Դուքսը վերկացաւ
որ գնայ, բայց դռանը հանելով շուռ ե-
կաւ և տեսնելով որ տղան շուարած կանգ-
նել է փողերի դլխին,—հարցրեց.

—Էլ ինչ ես կանգնել. հո էլ բան չունիս
ասելու ինձ:

—Սիրտս չի տալիս ձեզնից բաժանուեմ,
պատասխանեց Լիլլին:

—Բա ջուլթակը՞:

—Ինչ արած. թէև ափսոսս գալիս է,
բայց կ'աշխատեմ մոռանալ:

—Դէ, որ այդպէս է, գնա ծառաներիս
մօտ, նրանց հետ կը նստես կը դաս Փարիզ:

—Շնորհակալ եմ ձեզնից, աղաղակեց
Լիլլին:

Դուքսի ծառաները Լիլլիին առան ի-
բանց հետ ու տարան Փարիզ:

Մենք էլ գնանք Փարիզ:



Ե.

ԼԻՎԼԻԻ ՊՂԻՆՁՆԵՐԸ

Հոկտեմբերի 17-էը 1647 թ., գիշերը Փարիզի Պալէ-Ռոյալի հրապարակով մի կառք էր անցնում Օրլէանեան տոհմի նշանագրեալ հագած ծառաներով: Կառքը այն է մօտենում էր պարտէզին, երբ յանկարծ մէջից մի կնոջ ձայն լսուեց.

—Կամաց, կամաց, գեռնին մարդ կայ պառկած, վրայովը չքշէք,—և մի ջահել, սիրուն գլուխ դուսնայեց կառքի պատուհանից:

Կառապանը կառքը կանգնացրեց, ծառաներից մինը իջաւ ու լապտերը ձեռքին սկսեց մանդալ և մի քնած երեխայ տեսնելով՝ ատով հրեց.

—Վերկաց, ճանապարհի վրայից հեռացի:

Երեխան ցրտից սրսրսրթալով վերթռաւ պառկած տեղիցը:

Կառքի մէջ նստած կինը դքսուհի Մոնպանսիէն էր, Օրլէանեան Աննա Մարիա-Լուիզան: Երեխայի խղճալի տեսքը նրա դուխը շարժեց:

—Դու ով ես. ինչ բան ունես այստեղ, հարցրեց նա, նայելով երեխային, և զարմանալով նրա քնքոյշ երեսահարքի վրայ, որ ամենևին չէր համապատասխանում նրա կոպիտ հագուստին:

—Քնել էի:

—Տուն չունիս, ինչ է, որ փողոցումն ես քնում:

—Ժբրախտաբար չունիմ:

—Բա քո ծնողները որտեղ են, դու ում որդին ես:

—Հայրս ու մայրս մեռել են. ես Իտալացի Ֆլորենցիա քաղաքիցն եմ, դուքս

Գիզը որ եկաւ Ֆլորենցիա, նրանից խնդրեցի, ինձ բերեց Փարիզ։

— Բա ինչու՞ է քեզ անտէր թողել։

—Դուքսը ինչ անի. նա ըսկի չի էլ իմանում որ ես փողոցումն եմ. խոհարարն է ինձ տանից դուրս քցել, նրա համար որ նրա պղինձներով խաղ էի անում։

— Ի՞նչպէս էիր պղինձներով խաղ անում, հարցրեց դքսուհին ծիծաղելով։

Երդ էի ածում։

—Պղինձների վրայ երդ էիր ածո՞ւմ։

— Այո՛, և այնպէս լաւ ածվում է որ։ Է՛հ, ինչ անէի, ուրիշ բան չկար ածելու, ես էլ պղինձները մեծութեան կարգով շարում էի ու վայտով չխչիկացնում։

— Բայց ասա տեսնենք, դուքսը Ֆլորենցիայից ինչու՞ բերեց քեզ։

—Այդ երկար պատմութիւն է, իսկ ես այնպէս սաւել եմ, որ ատամս ատամիս է կպել, հոգիս եմ կարողանում խօսել։

—Քաղցած հօ չես։

—Հա, շատ քաղցած եմ, ամբողջ օրը բերանս բան չեմ դրել։

—Այս երեխային տարէք պալատը, հրամայեց դքսուհին ծառաներին. ուտացրէք,

խմացրէք, պառկացրէք քնի և վաղը առաւօտ մաքուր նոր շոր հագցրէք բերէք ինձ մօտ։

Բայց միւս օրը սկսուեցին սպանիական դռան բանակցութիւնները Սպանիայի նոր այրիացած թագաւոր Փիլիպպոս Դ-ի՝ դքսուհի Մօնպանսիէի հետ պսակուելու համար— և փողոցում գտնուած երեխան մոռացուեց։

Բայց որ մի անգամ պալատն ընկաւ Լիւլլին, այնուհետև մնաց այնտեղ իբրև ծառայ և կարգուեց մուքուրիկ։



Զ.

ՄԻՇԷԼ

Այս երեկոյ Միշելը գալու է մեզ մօտ, թէ չէ, հարցնում էր դքսուհի Մոնպանսիէն մի իշխանի, որ խորը գլուխ էր տալիս նրան:

— Ես այսօր նրան տեսայ. խոստացաւ որ անպատճառ ժամի վեց կ՚գայ:

—Բայց արդէն եօթն է, ասաց դքսուհին:

— Միշէլն ո՞վ է, հարցրեց դուքս Գիզը մօտ գալով խօսողներին,—Իտալիայից վերադառնալուց յետոյ ինչ խօսակցութիւն որ լսում եմ դրա մասին է լինում:

— Նրա երգելը լսել էք, հարցրեց ներկայ եղողներից մէկը դքսին:

—Ոչ, պատասխանեց դուքսը, բայց երեւակայում եմ...

— Անկարելի է որ կարողանաք երեւակայել, խօսքը ընդհատեց դքսուհին, ով որ Միշէլի երգելը չի լսել՝ ոչինչ չի լսել: Ես սաստիկ կը տխրեմ, եթէ նա չգայ:

Նա չի համարձակուի ձերդ բարձրութեան հրամանը չկատարել...

— Դուք նրան չէք ճանաչում, դուքս, դարձեալ խօսքը կտրեց դքսուհին, նա այնպիսի մարդ է, որ եթէ ճանապարհին յանկարծ մէկը պատահի ու խնդրի որ գնայ մի պանդոկում երգի, խնդիրքը կը կատարի՝ կ՚երթայ առանց նայելու թէ ով է խնդրողը և ինչ պանդոկ է հրաւիրում իրան. և ոչ միայն իմ հրաւէրը կը մոռանայ, այլ թագաւորը ինքն էլ որ հրաւիրած լինի՝ նրա համար միևնոյնն է:

— Գալիս է, գալիս, ազդակեց մի երիտասարդ ազնուական, որը երկար ժամանակ լուսամուտից նայում էր, որ երգչի գալը շուտով տեսնի և դքսուհուն յայտնի:

— Որ այդպէս է, մինչև նրա գալը ասէք

ինձ՝ ինչ մարդ է նա, հարցնում էր դքսուհին նոյն աղնուականին, ես նրա մասին ոչինչ չգիտեմ, բացի այն՝ որ նա հիանալի երգում է:

—Միշել Լամբերտը ծնուել է Պուատուի Վիլոնա գիւղաքաքում 1610 թուականին, սկսեց պատմել աղնուականը. նրա մայրը, որ մի աղքատ կին էր, սաստիկ սիրում էր երաժշտութիւն և երգում էր վանքերում: Որդին ժառանգեց նրանից երաժշտութեան սէրը և սկսեց երգել եկեղեցում: Քիչ ժամանակից յետոյ երիտասարդ երգչի հրաշալի ձայնի հռչակը ամեն տեղ տարածուեց. հեռու տեղերից գալիս էին Լամբերտի երգելը լսելու. պալատական երգչապետը նրա ձայնը լսելով հրաւիրեց նրան այստեղ: Ահա այս է նրա երաժշտական ասպարէզում ունեցած գործունէութեան սկիզբը:

—Ի՞նչ եղաւ Միշելը. ինչո՞ւ չի գալիս: Սխալուած կը լինիք, նա չէր լինի եկողը:

—Չէ, լաւ տեսայ նա էր. բայց շատ կարելի է ներքևում ծառաները խնդրած լինին թէ երգի, նա էլ մնացած լինի այնտեղ: Նրա համոզմունքով միայն հասարակ ժողովուրդը իմանում է գնահատել երաժշտութիւնը և միայն նա է որ առանց

ոչնչից քաշուելու սրտանց հաւանութիւն է ցոյց տալիս:

Ձայն չէք լսում, հարցրեց դքսուհին ուշադրութիւնով ականջ դնելով:

—Հա, կարծես զանգակի ձայն լինի:

—Ոչինչ չի հասկացվում:

—Ինչ-որ ածում են. բայց ծանօթ դորձիք չէ:

—Լսում էք, լսում էք, հարցրեց դքսուհին: Այդ ժամանակ մի խռպոտ ձայն լսուեց:

—Էլի պղինձները տարաք. շո՛ւտ արա բեր պղինձները:

Է.

ՄՈՒԲՈՒՐԻԿԸ

Զարմանալի բան է, ասաց դուքսը, ես Ֆլորենցիայից ինձ հետ մի տղայ բերեցի. խոհարարս նրան դուսարեց, որովհետև հետը չէր վարվում, միշտ պղինձները խոհանոցից տանում էր...

Ես այդ երեխային մի օր փողոցումը գտայ և հրամայեցի որ տուն բերեն, ասաց դքսուհին, յանկարծ յիշելով Լիլլիին, և վերկացաւ ու դնաց դէպի ներքև տանող լայն սանդուղքը: Ամբողջ հասարակութիւնը հետևեց դքսուհուն: Յանկարծ բոլորը ապշած կանգ առան:

Ներքևում, սանդուղքի մօտ, կարգով

դարսուած էր զանազան տեսակ մեծութիւնով պղինձներ. մուքուրիկը մի փայտ բռնած ձեռքին վազում էր մի պղնձի մօտից միւս պղնձի մօտ, մէկ այս պղնձին խփելով մէկ միւսին. այսպէս ածում էր ու հետը երգում և կարգին երաժշտութիւն էր դուրս գալիս: Ծառաները շրջապատել էին նրան և զարմացած ականջ էին դնում այս տարօրինակ երաժշտութեանը:

Մի քիչ հեռուում կանգնած էր բարկութիւնից կատաղած խոհարարը և գոռգոռում էր մուքուրիկի վրայ, պահանջելով նրանից իր պղինձները և աշխատելով ազատուել մի նիհար մարդու ձեռքից, որ նրան պինդ բռնել էր:

—Սուս կաց, ինչ ես գոռգոռում, պղինձները հօ չեն ուտի, յետոյ քեզ կը տան, առ ինչ ուզում ես արա, ասում էր խոհարարին նրան բռնող մարդը: Հրլա մի լսի, տես ինչ հիանալի երաժշտութիւն է:

—Յետոյ էլ ինչիս պէտքն է. ընթրիք պատրաստելու ժամանակն է. իմ պղինձները հօ դատ չեն:

—Մի ջութակ որ ունենայի, պղինձներիդ ձեռը չէի տայ, աղաղակեց Լիլլին:

— Ջութակ ածել գիտես, հարցրեց Միշէլը, որ խոհարարին բռնել էր և որինվերևում ամբողջ հասարակութիւնը սպասում էր։

— Ածում եմ, բայց վատ։ Այ, եթէ Միշէլ Լամբէրտին տեսնէի, կը խնդրէի որ...

— Ի՞նչ կը խնդրէիր նրանից, ասա, ես եմ Միշէլ Լամբէրտը։

— Դո՞ւք, դո՞ւք էք Միշէլ Լամբէրտը։ Որ այդպէս է, ձեզանից մի բան եմ խնդրում. ես աղքատ եմ և չեմ կարող ձեզ խնդրել որ ինձ երաժշտութիւն դաս տաք, բայց յոյս ունիմ թէ կը թոյլ տաք ինձ երբեմն-երբեմն դալ ձեզ մօտ և լսել ձեր երգելը կամ նայել թէ ինչպէս էք ուրիշներին դաս տալիս։ Խօսք եմ տալիս որ համեստ և հնազանդ կը լինիմ։

— Տեսնենք, ասաց Լամբէրտը, առ իմ ջութակը, ցոյց տուր տեսնենք ինչպէս ես ածում։

Իլլին ուրախացած ձեռքն առաւ ջութակը ու սկսեց ածել. հէնց սկզբից Լամբէրտը զարմացած նայում էր նրա վրայ, բայց քանի նա ածում էր այնքան աւելի էր Լամբէրտը հիանում։ Իլլին ուրախութիւնից իրան կորցրել էր։

— Ի՞նչպէս էր, հարցրեց նա, երբ ածեց վերջացրեց։

Լամբէրտը ուրախութիւնից վրապրեցաւ համբուրեց Իլլիին։

— Հրաշալի՜ էր, գեղեցի՜կ էր, ասում էր նա. դու երաժշտութեան համար ես ստեղծուած։ Դէն գցի այդ պղինձները, արի ինձ մօտ. ես կը պահեմ քեզ, կը սովորեցնեմ ու ճանապարհ բացկանեմ քեզ համար կեանքի մէջ։ Դու շատ առաջ կ'երթաս,— և նրա ձեռքիցը բռնելով ուզում էր տանել դքսուհու մօտ և յետ նայելով երբ տեսաւ թէ դքսուհին իր բոլոր պալատականների հետ կանգնած է սանդուղքի գլխին՝ ասաց.

— Այս տղայի տեղը ձեր խոհանոցը չէ, դքսուհի, խնդրեմ թողէք սա գայ իմ տանը կենայ. ես յանձն եմ առնում սրան երևելի երաժիշտ շինել։

— Դուք կարող էք դրան երաժիշտ շինել, պատասխանեց դքսուհին, բայց ես չեմ կամենում որ դա իմ մօտից գնայ. դա ինձ մօտ կ'ապրի, դուք էլ կը դաք դաս կը տաք դրան. ես կը վճարեմ։ Իլլի, գնա գլխարկդ ու գոգնոցդ հանի ու կարգին շորեր հագի։

Կէս տարուց յետոյ Իլլին արդէն տաններկու երաժիշտների գլխաւոր էր, որոնք նրա առաջնորդութիւնով ածում էին

նրա շարադրած նուագները. այս բանը այնքան դուր եկաւ Լիւի ԺԴ-րդ թագաւորին, որ խնդրեց դքսուհուն՝ փոքրիկ երաժշտին իրան տալ։

Երաժիշտ Լիւլին մասնակցում էր բոլոր պալատական նշանաւոր տօնախմբութիւններին, նուագներ էր շարադրում զանազան հանդէսների համար և գրում էր բալէտներ, որոնց մէջ մասնակցում էր երբեմն և նոյն ինքն թագաւորը։

Թագաւորը նրան երաժշտութեան ակադեմիք շինեց։ Լիւլին մի անգամ անզգուշաբար վիրաւորեց իրան այն գաւազանով, որով երաժշտապետները կառավարում են երաժիշտներին. վերքը մահացու էր, այնպէս որ 1687 թ. նա մեռաւ այդ վերքից։ Նրա կինը շիրիմ կանգնեցրեց նրան այս լատիներէն տապանագրով.

«Ի սիրդանէ անտի, ով մահ, կոյր են ա-
նուանել քեզ,
Բայց դու Լիւլիին տանելով՝ ցոյց տուիր
որ խուլ էլ ես»։

/571/
ՀԱՅ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ Ա.
Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆՎԱՆ